ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2015թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2- րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, ՀԽՍՀ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Արա Սարգսյանի դիմաքանդակը ՀՀ նկարիչների միության շենքի պատին /Աբովյան փողոց հ.16/ տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, ՀԽՍՀ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Արա Սարգսյանը ծնվել է 1902թ. ապրիլի 4-ին Կոստանդնուպոլսում: 1919-1921թթ. սովորել է տեղի գեղարվեստի վարժարանում, 1921-1924թթ.՝ Վիեննայի գեղարվեստի ակադեմիայի բարձրագույն դպրոցում: Ավստրիայում ստեղծել է «Ռիխարդ Ռոբերտ» (1922թ.), «Կարլ Վայգել» (1922թ.), «Հեղինե Զատեյան» (1923թ.) դիմաքաղակները, «Լուռ վիշտ» (1923թ.) կոմպոզիցիան, որոնք 20-րդ դարի հայկական քանդակագործության ինքնատիպ և լավագույն գործերից են:

1925թ. տեղափոխվել է Երևան: 1925-1930թթ. դասավանդել է Երևանի գեղարվեստաարդյունաբերական տեխնիկումում:

1926թ. կազմակերպել է Հեղափոխական Ռուսաստանի նկարիչների ընկերակցության հայկական մասնաճյուղը և ընտրվել է նախագահ:

1945թ. նրա ղեկավարությամբ հիմնադրվել է Երևանի գեղարվեստական ինստիտուտը (Երևանի գեղարվեստի ակադեմիա), որի տնօրենն է եղել մինչև 1959թ., ապա՝ ամբիոնի վարիչ, արվեստանոցի ղեկավար (պրոֆեսոր՝ 1947թ.-ից):

1932-1937թթ. եղել է Հայաստանի նկարիչների միության նախագահը: 1920-30թթ. ստեղծել է «Վահան Թոթովենց», «Մանուկ Աբեղյան», «Հրաչյա Աճառյան», «Մարիամ Ասլամազյան», «Միքայել Նալբանդյան», «Թորոս Թորամանյան», «Ալեքսանդր Շիրվանզադե», «Սուրեն Սպանդարյան», «Նաիրի Զարյան», «Ալեքսեյ Ջիվելեգով» դիմաքանդակները: Ստեղծել է նաև «Մայիսյան ապստամբության հերոսների» հուշարձանի (1931թ.) մոնումենտալ հարթաքանդակները:

1943թ. ստեղծել է իր կոմպոզիցիոն մտահղացումների գլուխգործոցը՝ «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» քանդակը: Հետպատերազմյան շրջանում կերտել է դիմաքանդակների շարք՝ «Ստեփան Շահումյան» (1949թ.), «Վարդան Աճեմյան» (1954թ.), «Ռաֆֆի» (1957թ.), «Վալերի Բրյուսով» (1967թ.) և այլն, նաև՝ բազմաթիվ մոնումենտալ քանդակներ՝ «Հովհաննես Թումանյան», «Ալեքսանդր Սպենդիարյան» (համահեղինակ՝ Ղուկաս Չուբարյան):

Արա Սարգսյանը մահացել է 1969թ. հունիսի 6-ին Երևանում:

Արա Սարգսյանի դիմաքանդակը ՀՀ նկարիչների միության շենքի պատին /Աբովյան փողոց հ.16/ տեղադրելու համար Երևանի քաղաքապետին միջնորդություններ են ներկայացրել Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Տ. Բարսեղյանը և ՀՀ նկարիչների միության նախագահը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ
ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արա Սարգսյանի դիմաքանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ
ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արա Սարգսյանի դիմաքանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ